ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
17 դեկտեմբերի 1997 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ (ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ) ՄԱՍԻՆ

Հոդված 12.1. Մասնավորեցում իրականացնող պետական կառավարման մարմինը

Մասնավորեցում իրականացնող պետական կառավարման մարմինը Պետական գույքի կառավարման կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե):

Հոդված 13. ~~**Մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները**~~

~~Մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին)՝~~

~~ա) մշակում է մասնավորեցման ծրագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.~~

~~բ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնավորեցման նախապատրաստական աշխատանքները.~~

~~գ) կնքում է Հայաստանի Հանրապետության կառավարության անունից մասնավորեցման գործարքներ, վերահսկում է պայմանագրային պարտավորությունների կատարումը, դրանց չկատարման դեպքում ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և մասնավորեցման պայմանագրով նախատեսված միջոցներ.~~

~~դ) ընդունում է «փոքր» մասնավորեցման հայտեր և դրանց ընթացք տալիս սահմանված կարգով.~~

~~ե) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված լինելու դեպքում՝ ընկերություններում նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու նպատակով նշանակում է կառավարիչ, վարձում է փորձագետներ.~~

~~զ) հաստատում է «փոքր» օբյեկտների տարածքի արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցները՝ ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության~~

~~հաստատած մեկ քառակուսի մետրի արժեքից և այդ գործակիցների նվազագույն և առավելագույն չափերից.~~

~~է) ընկերությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ կամ աճուրդով մասնավորեցնելու դեպքում հաշվարկում է մասնավորեցվող պետական գույքի մեկնարկային գինը.~~

~~ը) վերահսկում և վերլուծում է մասնավորեցման ընթացքը՝ այդ նպատակով տեղեկություններ ստանալով պետական կառավարման և դատական մարմիններից.~~

~~թ) քննարկում է մասնավորեցման վերաբերյալ առաջարկությունները, դիմումները, գանգատները.~~

~~ժ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ լիազորություններ:~~

~~(13-րդ հոդվածը փոփ. 08.10.02 ՀՕ-423-Ն)~~ **Կոմիտեի լիազորությունները**

1. Կոմիտեն՝

1) մշակում է մասնավորեցման ծրագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը և ներկայացնում է Կառավարության հաստատմանը.

2) իրականացնում է Կառավարության հաստատած մասնավորեցման նախապատրաստական աշխատանքները.

3) կնքում է Կառավարության անունից մասնավորեցման գործարքներ, վերահսկում է պայմանագրային պարտավորությունների կատարումը, դրանց չկատարման դեպքում ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և մասնավորեցման պայմանագրով նախատեսված միջոցներ.

4) ընդունում է «փոքր» մասնավորեցման հայտեր և դրանց ընթացք տալիս սահմանված կարգով.

5) Կառավարության որոշմամբ նախատեսված լինելու դեպքում՝ ընկերություններում նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու նպատակով նշանակում է կառավարիչ, ներգրավում է փորձագետներ.

6) հաստատում է «փոքր» օբյեկտների տարածքի արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցները՝ ելնելով Կառավարության հաստատած մեկ քառակուսի մետրի արժեքից և այդ գործակիցների նվազագույն և առավելագույն չափերից.

7) ընկերությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ կամ աճուրդով մասնավորեցնելու դեպքում հաշվարկում է մասնավորեցվող պետական գույքի մեկնարկային գինը.

8) վերահսկում և վերլուծում է մասնավորեցման ընթացքը՝ այդ նպատակով տեղեկություններ ստանալով պետական կառավարման և դատական մարմիններից.

9) քննարկում է մասնավորեցման վերաբերյալ առաջարկությունները, դիմումները, գանգատները.

10) պետական գույքի մասնավորեցման ժամանակ իրականացնում է պետության սեփականությունը հանդիսացող կառուցապատված հողամասերի՝ սահմանված կարգով մասնավորեցումը,

11) մասնավորեցման նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու նպատակով ներգրավում է փորձագետներ, ինչպես նաև մասնավորեցման աշխատանքներում ներգրավում է գիտահետազոտական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև առանձին մասնագետների, այդ թվում՝ փորձաքննության նպատակով,

12) համակարգում է մասնավորեցվող և օտարվող պետական գույքի արժեքի հաշվարկման (գնահատման և վերագնահատման) աշխատանքները,

13) իրականացնում է վերահսկողություն իր կողմից կնքված պայմանագրով մյուս կողմի համար նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ,

14) կազմակերպում է մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների (այդ թվում՝ ազդագրերի) հրապարակումը,

15) իրականացնում է պետական գույքի մասնավորեցման, տնօրինման, ինչպես նաև հաշվառման գործընթացների վերլուծությունը և ամփոփում դրանց վերաբերյալ առաջարկությունները,

իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 15. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցումը

1. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցումը՝ տվյալ ընկերությունում պետական բաժնեմասի ամբողջությամբ կամ դրա մի մասի վաճառքն է բաժնետոմսերի քանակի բաց աճուրդի միջոցով:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցումն իրականացվում է փակ բաժանորդագրությամբ՝ աշխատավորական կոլեկտիվի անդամների համար և բաց բաժանորդագրությամբ՝ այլ անձանց համար, ընդ որում, կոլեկտիվի անդամները բաց բաժանորդագրությանը կարող են մասնակցել ընդհանուր հիմունքներով: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում է մասնավորեցվող ընկերության մեկնարկային գինը, որը ներառում է բաժնետոմսերի մեկնարկային քանակը և բաժնետոմսի անվանական արժեքը, որը պետք է հարյուր դրամին բազմապատիկ լինի, բայց քսան հազար դրամից ոչ ավելի: Հայաստանի

Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև ազդագրի հրապարակման ժամկետները, ընկերության պարտավորությունները գույքի գնահատման պահին, ներառյալ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների համար ապառքները, տույժերը և տուգանքները:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել բաժանորդագրության կայացման նվազագույն սահման:

2. Պետական գույքի մասնավորեցումը բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության միջոցով իրականացնում է ~~լիազորված պետական մարմինը~~կոմիտեն՝ ազդագրի հրապարակման տասներորդ օրվանից սկսած:

~~Լիազորված պետական մարմինը~~Կոմիտեն բաժնետոմսերի փակ և բաց բաժանորդագրությունն անցկացնում է զուգահեռ:

Բաժանորդագրությունն իրականացվում է երեսունհինգ օրվա ընթացքում, այդ թվում՝ աշխատավորական կոլեկտիվի անդամներին՝ փակ բաժանորդագրություն՝ մեկ ամսվա ընթացքում:

3. Եթե փակ բաժանորդագրության համար նախատեսված ժամկետում փակ բաժանորդագրությանը մասնակցել ցանկացողների թվաքանակը չի գերազանցում աշխատավորական կոլեկտիվի անդամների 50 տոկոսը, ապա փակ բաժանորդագրություն չի իրականացվում, և կոլեկտիվին փակ բաժանորդագրության համար վերապահված բաժնետոմսերը ենթակա են վաճառքի՝ բաց բաժանորդագրության միջոցով:

4. Եթե մասնավորեցումը համարվում է կայացած, ապա աշխատավորական կոլեկտիվի անդամներին հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է՝ ելնելով դրանց տեսակարար կշռից, որը հաշվարկվում է փակ բաժանորդագրությամբ ձեռք բերված բաժնետոմսերի քանակը բաժանելով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված բաժնետոմսերի քանակին:

Ընդ որում, եթե՝

ա) բաժանորդագրությունից ձեռք է բերվել ավելի շատ քանակությամբ բաժնետոմս, քան սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ապա փակ բաժանորդագրությունից աշխատավորական կոլեկտիվի անդամներին հասանելիք բաժնետոմսերի քանակն ավելացվում է այն հաշվարկով, որ այն համապատասխանի հաշվարկված տեսակարար կշռին: Այդ դեպքում լրացուցիչ բաժնետոմսերը հատկացվում են անհատույց.

բ) բաժանորդագրությունից ձեռք է բերվել ավելի քիչ քանակությամբ բաժնետոմս, քան սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ապա փակ բաժանորդագրությունից աշխատավորական կոլեկտիվի անդամներին

հասանելիք բաժնետոմսերի քանակը պակասեցվում է այն հաշվարկով, որ այն համապատասխանի հաշվարկված տեսակարար կշռին: Այդ դեպքում աշխատավորական կոլեկտիվի անդամներին, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, վերադարձվում են պակասեցված բաժնետոմսերի քանակի համար վճարներն այն վճարման միջոցով, որով դրանք ձեռք են բերվել:

5. Եթե մասնավորեցվող ընկերությունում սույն օրենքի 8 հոդվածի համաձայն տեղի է ունեցել մասնակի անհատույց մասնավորեցում կամ սույն օրենքի 9 հոդվածի համաձայն պետական բաժնեմասի ներդրումային մասնավորեցում, ապա մասնակի անհատույց մասնավորեցմանը կամ պետական բաժնեմասի ներդրումային մասնավորեցմանը մասնակցած անձանց հասանելիք բաժնետոմսերի քանակը հաշվարկվում է այնպես, որ պահպանվի մինչև ընկերության բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցումը եղած դրանց հարաբերակցությունը պետական բաժնեմասի հետ:

6. ~~Լիազորված պետական մարմինը~~Կոմիտեն պատասխանատու է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցման ազդագրում հրապարակված տվյալների համար:

7. ***(կետն ուժը կորցրել է 08.10.02 ՀՕ-423-Ն)***

(15-րդ հոդվածը լրաց., փոփ. 08.10.02 ՀՕ-423-Ն)

Հոդված 16. Պետական գույքի մասնավորեցումն աճուրդով

1. Պետական գույքի աճուրդով մասնավորեցման դեպքում այդ գույքի սեփականության իրավունքը տրամադրվում է աճուրդի այն մասնակցին, ով աճուրդի ընթացքում առաջարկել է առավելագույն գին:

Պետական գույքի աճուրդով վաճառքը կատարվում է այն դեպքում, երբ գնորդից չի պահանջվում որևէ պայմանի կատարում:

Միայն մեկ առաջարկի առկայությունը չի կարող առանց հաղթողին հայտարարելու աճուրդը դադարեցնելու պատճառ համարվել:

2. Աճուրդով պետական գույքի մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են աճուրդի ձևերը՝ դասական, հոլանդական[Error! Hyperlink reference not valid.], ամբողջությամբ կամ լոտային, մասնավորեցվող գույքի մեկնարկային գինը և աճուրդի իրականացման ժամկետները: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև աճուրդով մասնավորեցման ենթակա ընկերության պարտավորությունները որոշման ընդունման պահին՝ ներառյալ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների համար ապառքները, տույժերը և տուգանքները:

3. Պետական գույքի մասնավորեցումն աճուրդի միջոցով իրականացնում է ~~լիազորված պետական մարմինը~~կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:

4. Պետական գույքի՝ աճուրդի միջոցով մասնավորեցման դեպքում, բացի մեկնարկային գնից, այլ գնային սահմանափակումներ չեն կիրառվում:

5. ***(կետն ուժը կորցրել է 08.10.02 ՀՕ-423-Ն)***

(16-րդ հոդվածը փոփ. 08.10.02 ՀՕ-423-Ն)

Հոդված 17. Պետական գույքի մասնավորեցումը մրցույթով

(վերնագիրը փոփ. 08.10.02 ՀՕ-423-Ն)

Պետական գույքը համարվում է մրցույթով մասնավորեցվող, եթե պետական գույքը մասնավորեցվում է նախօրոք սահմանված պայմաններին առավելագույն չափով բավարարող առաջարկ ներկայացրած մասնակցին:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մրցույթը կարող է իրականացվել մասնակիցների նախնական որակավորմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մրցույթի հաղթողին որոշելու նպատակով կարող են առաջադրվել հետևյալ պայմանները՝

ա) գինը.

բ) ներդրումների չափը.

գ) սոցիալական երաշխիքները.

դ) ծառայությունների մատուցման սակագները, եթե մասնավորեցվում է օրենքով կամ այլ իրավական ակտով լիցենզավորվող գործունեություն իրականացնող ընկերության պետական բաժնեմասը.

ե) սույն հոդվածի «ա» և «դ» կետերում նշված պայմանների կամ դրանց մի մասի նախօրոք սահմանված համամասնություններով կազմված համախումբը.

զ) այլ պայմաններ:

Պետական գույքի մրցույթով մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել մրցութային հանձնաժողով, սահմանվել դրա կազմը և իրավասությունները:

(մասն ուժը կորցրել է 08.10.02 ՀՕ-423-Ն)

Մրցութային հանձնաժողովը, իսկ վերջինիս չստեղծվելու դեպքում՝ ~~լիազորված պետական մարմինն~~կոմիտեն իրավասու է մրցութային առաջարկների հստակեցման նպատակով ուղղակի բանակցություններ վարել մրցույթի մասնակիցների հետ, եթե դա նախատեսված է մրցույթով պետական գույքը մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Մրցույթի մասին պետք է հայտարարվի հրապարակայնորեն՝ մրցույթն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան չի նախատեսված:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն անձը, ում առաջարկներն առավելագույն չափով են բավարարում ներկայացված պահանջները:

Մրցույթի արդյունավետ իրականացման նպատակով մրցութային հանձնաժողովը, իսկ վերջինիս չստեղծվելու դեպքում՝ ~~լիազորված պետական մարմինն~~կոմիտեն իրավասու է մրցույթի նախապատրաստվելու և կազմակերպելու համար ընդգրկել մասնագիտացված կազմակերպություններ:

Միայն մեկ առաջարկի առկայությունը չի կարող առանց հաղթողին հայտարարելու մրցույթը դադարեցնելու պատճառ համարվել:

Եթե մրցույթը առաջարկների բացակայության պատճառով սահմանված ժամկետում չի կայանում կամ դադարեցվում է առանց հաղթողին որոշելու, մրցույթը համարվում է չկայացած:

(17-րդ հոդվածը փոփ., լրաց. 08.10.02 ՀՕ-423-Ն)

Հոդված 18. Պետական գույքի մասնավորեցումն ուղղակի վաճառքի ձևով

1. Պետական գույքը մասնավորեցվում է ուղղակի վաճառքի ձևով՝

տվյալ ընկերության աշխատավորական կոլեկտիվին.

տվյալ պետական գույքի վարձակալին.

տվյալ ընկերության ոչ պետական բաժնեմասի սեփականատիրոջը (սեփականատերերին).

տվյալ գույքի հավանական գնորդին, եթե այն նախօրոք հայտնի է:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուղղակի վաճառքի ձևով պետական գույքը մասնավորեցնելու մասին պետք է մասնավորապես բովանդակի՝ գնորդի անունը կամ անվանումը,
մասնավորեցվող պետական գույքի գինը, վճարման համար օգտագործվող միջոցները, վճարման ժամկետները և վճարման առանձնահատկությունները:

Մասնավորեցման ծրագրում ընդգրկված պետական գույքը տվյալ ընկերության աշխատավորական կոլեկտիվին ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցնելու հիմք կարող է հանդիսանալ կոլեկտիվի կողմից ~~լիազորված պետական մարմին~~կոմիտե ներկայացված հայտը: Հայտի ձևը, ներկայացման, քննարկման և մերժման կարգն ու ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ուղղակի վաճառքի ձևով պետական գույքը տվյալ ընկերության աշխատավորական կոլեկտիվին մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելուց հետո այդ որոշմամբ սահմանված ժամկետներում աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովը

(լիազորների ժողովը կամ համաժողովը) սույն օրենքի համաձայն իրականացնում է մասնավորեցվող պետական գույքի բաշխումը աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվող անձանց միջև, ընտրում է նախաձեռնող խումբ, որին իրավունք է տրվում կոլեկտիվը ներկայացնել պետական բաժնեմասը գնելու ընթացքում: Աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը կամ համաժողովը)՝ ձայների 3/4-ի մեծամասնությամբ, նախաձեռնող խմբի անդամների համար կարող է սահմանել նրանց մասնակցության չափն ապագա ընկերության մեջ, ինչպես նաև նախաձեռնող խմբի կազմում ընդգրկել տվյալ ընկերության աշխատավորական կոլեկտիվի անդամ չհամարվող անձանց, որոնց թիվը 3 հոգուց ավել չպետք է լինի: Իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները չեն կարող լինել նախաձեռնող խմբի անդամ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

4. Պետական գույքի վարձակալներն ունեն այդ գույքի մասնավորեցման նախապատվության իրավունք, եթե՝

այդ գույքը մասնավորեցման ծրագրերում ընդգրկված ընկերություններին պատկանող գույքի մասը չէ.

վարչական և հասարակական շենքերում ու շինություններում վարձակալած տարածք չէ:

5. Պետական գույքը վարձակալներին մասնավորեցնելու հարցը քննարկելու համար հիմք է հանդիսանում ~~լիազորված պետական մարմին~~կոմիտե ներկայացրած հայտը: Հայտի ձևը և ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. ~~Լիազորված պետական մարմինը~~Կոմիտեն հայտը քննարկում է երկու ամսվա ընթացքում: Հայտի պաշտոնական ընդունման կամ մերժման մասին գրավոր պատասխանն ուղարկվում է հայտը ներկայացնող անձանց:

Հայտի մերժումը հնարավոր է, եթե՝

ա) այն ներկայացրած անձը չի կարող հանդես գալ որպես մասնավորեցման հետևանքով սեփականության իրավունքներ ձեռք բերող անձ.

բ) օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված են տվյալ գույքի մասնավորեցման սահմանափակումներ.

գ) մասնավորեցման հետևանքով կարող է անհնարին դառնալ վարձատուին պատկանող վարձակալության չհանձնած գույքի օգտագործումը:

Վարձակալված գույքի գնման հայտի մերժումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

7. Սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված հայտի մերժման հիմքերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ~~լիազորված պետական մարմնի~~կոմիտեի ներկայացմամբ, երկու ամսվա ընթացքում

որոշում է ընդունում վարձակալված գույքը ուղղակի վաճառքի ձևով վարձակալին մասնավորեցնելու մասին:

8. Պետական գույքի մասնավորեցումն ուղղակի վաճառքի միջոցով իրականացնում է լիազորված պետականմարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:

9. ***(կետն ուժը կորցրել է 08.10.02 ՀՕ-423-Ն)***

(18-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 08.10.02 ՀՕ-423-Ն)

Հոդված 22. Լուծարված ընկերությունների (ձեռնարկությունների) գույքի առանձին տարրեր վարձակալության տրամադրելը

Լուծարված պետական ընկերությունների գույքը կարող է տրամադրվել կարճատև կամ երկարատև վարձակալության:

Պետական գույքի առանձին տարրերի վարձատու է ~~լիազորված պետական մարմինը~~կոմիտեն:

Պետական գույքը մրցույթով վարձակալության հանձնելու դեպքում մրցույթի հիմնական պայմանը վարձակալական վճարն է և վարձակալության ժամկետը:

Պետական գույքի վարձակալության դիմաց վարձակալական վճարները (առանց վարձակալության տրամադրման նպատակով կատարված ծախսերի) փոխանցվում են պետական բյուջե:

Հոդված 24[1]. Պետական գույքի մասնավորեցումը

1. Պետական գույքի մասնավորեցման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Պետական գույքի մասնավորեցումը չկայանալու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը 60 օրվա ընթացքում ընդունում է նոր որոշում՝ գույքը սույն օրենքով սահմանված կարգով մասնավորեցնելու կամ լուծարելու մասին:

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «դ» ենթակետերով սահմանված ձևերով պետականգույքը չմասնավորեցվելու դեպքում, մինչև տվյալ գույքը մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության նոր որոշման ընդունումը, մասնավորեցման սուբյեկտները կարող են դիմել ~~լիազորված պետական մարմին~~կոմիտե՝ տվյալ գույքը

մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության վերջին որոշմամբ սահմանված պայմաններով այդ գույքը ձեռք բերելու համար:

4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված ձևով պետական գույքը չմասնավորեցվելու դեպքում, մինչև տվյալ գույքը մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության նոր որոշման ընդունումը, մասնավորեցման սուբյեկտները կարող են դիմել ~~լիազորված պետական մարմին~~կոմիտե՝ տվյալ գույքը մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության վերջին որոշմամբ սահմանված պայմաններով այդ գույքը ձեռք բերելու համար, եթե այդ որոշմամբ սահմանված բոլոր պայմաններն արտահայտված են թվային մեծություններով:

5. Մասնավորեցման սուբյեկտի դիմումն ստանալուց հետո ~~լիազորված պետական մարմինը~~կոմիտեն, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մեկամսյա ժամկետում պետական գույքն ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցնում է՝ մասնավորեցման սուբյեկտին:

(24[1]-րդ հոդվածը լրաց. 08.10.02 ՀՕ-423-Ն, փոփ. 23.05.06 ՀՕ-75-Ն)

Հոդված 26. «Փոքր» մասնավորեցման կարգը

1. ~~Լիազորված պետական մարմինը~~Կոմիտեն, Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ, մասնավորեցվող «փոքր» մասնավորեցման օբյեկտները գրավոր առաջարկում է դրանց աշխատավորական կոլեկտիվներին:

2. Գրավոր առաջարկը ստանալուց հետո 20 օրվա ընթացքում, աշխատավորական կոլեկտիվը ~~լիազորված պետական մարմին~~կոմիտե պետք է ներկայացնի գրավոր համաձայնություն՝ օբյեկտը նշված գնով գնելու մասին, ընդհանուր ժողովի որոշումը՝ այդ նպատակով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին, ինչպես նաև մուծի կանխավճար՝ օբյեկտի արժեքի հինգ տոկոսի չափով:

(մասն ուժը կորցրել է 08.10.02 ՀՕ-423-Ն)

3. Բաժնեմասերի բաշխումն աշխատավորական կոլեկտիվի անդամների միջև իրականացվում է կոլեկտիվի անդամների (ըստ սույն օրենքի 2 հոդվածի 6-րդ մասի «ա» կետի սահմանման) որոշմամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, կոլեկտիվի անդամների՝ բաժնեմասեր ձեռք բերելու հավասար իրավունքների հաշվարկով: Եթե կոլեկտիվի անդամը հրաժարվում է իրեն հասանելիք բաժնեմասից, ապա նրա բաժնեմասը հավասարաչափ բաշխվում է կոլեկտիվի մնացած անդամների միջև: «Փոքր» օբյեկտը կարող է սեփականաշնորհվել աշխատավորական կոլեկտիվի անդամներին, եթե դրա հաստիքացուցակային կազմի ավելի քան 50 տոկոսը

ցանկություն է հայտնել դառնալ սեփականատեր և կատարել է համապատասխան ներդրում:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պայմանները չկատարելու դեպքում աշխատավորական կոլեկտիվը զրկվում է նախապատվության իրավունքից:

(26-րդ հոդվածը փոփ., խմբ. 08.10.02 ՀՕ-423-Ն)

Հոդված 29. Մասնավորեցման պայմանագիրը

Մասնավորեցման հետևանքով սեփականության իրավունքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ~~լիազորված պետական մարմնի~~կոմիտեի և գնորդի միջև կնքված պետականգույքի մասնավորեցման գրավոր գործարքով՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ պետական գրանցում ստանալուց հետո:

Բաժնետոմսերի և փոխարկելի պարտատոմսերի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված՝ բաժնետոմսերը կամ դրանց սերտիֆիկատները սահմանված կարգով գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվելու պահից:

Մասնավորեցվող անշարժ գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է մասնավորեցման գործարքի (պայմանագրի) պետական գրանցումից հետո:

(29-րդ հոդվածը խմբ., լրաց. 08.10.02 ՀՕ-423-Ն)

Հոդված 31. Մասնավորեցման մասնակիցներին տրվող պետական երաշխիքները

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է մասնավորեցման մասնակիցների իրավունքները: Դրանց խախտման համար մեղավոր պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Մասնավորեցման ընթացքում և հետևանքով ~~լիազորված պետական մարմնին~~կոմիտեին հայտնի դարձած մասնավորեցման մասնակիցներին վերաբերող տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ենթակա չեն հրապարակման՝ առանց վերջիններիս համաձայնության:

Հոդված 32. Մասնավորեցման գործարքներն անվավեր ճանաչելը

Մասնավորեցման գործարքները դատական կարգով անվավեր են ճանաչվում, եթե մասնավորեցված գույքը սույն օրենքով ենթակա չէ մասնավորեցման, կամ մասնավորեցման հետևանքով պետական սեփականություն ձեռք բերած անձը սույն օրենքով իրավունք չունի մասնակցելու մասնավորեցմանը: Վերջին դեպքում գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այդ անձին վերաբերող մասով:

Մասնավորեցման համար վճարումը, այդ թվում՝ հերթական վճարումը, ինչպես նաև մասնավորեցման գործարքի այլ պայմանները չկատարելու դեպքում ~~լիազորված պետական մարմինը~~կոմիտեն հայց է ներկայացնում դատարան՝ գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելու կամ մասնավորեցման պայմանագրով նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ կիրառելու մասին:

(32-րդ հոդվածը լրաց. 08.10.02 ՀՕ-423-Ն)